


4464

Qumprnq-npu4h

Q-5npq- 4pmfp

2176



Pat \$2104
1894

694

2033

891.77-8

0-49

ԳԵՂԱՐՔ ԿՐԱԲԲ

(ՕՍՏՐՈՎՈՐՍԿԻ ԺՈՂՈՎՐԾՈՒԹԻՒՆ)

Թարգմանեց

Յիրուհի Կոստանեանց

133

Թ. Ի. Փ. Լ. Խ. Ս

Տպարան Մ. Շարաձեի, Կիկ փող. ա. 21.

Տիպ. Մ. Շարաձե, Նիկոլ. պլ. ճ. 21.

1894

2003

2011

891.71- 4

1409

091
May.

ԳԵՂԱՐՔ ԿՐԵԲԲ

(ՕՍՏՐՈԳՈՐԾՎԱՆԻ ԺՈՂՈՎԵԹՈՒԻՑ)



Թարգմանեց

Տիրութիւն Կոստանեանց

1009

ԹԻԳԼԻՄ

Տպարան Ա. Շարածէի, Նիկո փող. ա. 21.
Տիկ Ա. Մարտիրոսյան Հ. 21

Тип. М. Шарадзе, Никол. ул. д. 21.

1894

ԳԵՂՂԻ ԿՐԱԲԲ

Дозволено цензурою, Тифлисъ, 26-го Ап-
реля 1894 года.



բարբը ծնաւ 1754
թուի Դեկտեմբե-
րի 12 ին փոքրիկ,
ծովեզերեալ Ալդ-
բօրօ քաղաքում:
Նորա հայրենի
քաղաքի շրջակալ-
քը վայրի ու մռալլ
էր: Տեղացի աղքատ ժողովուրդը չէր պա-
րապում երկրագործութեամբ. նորա գործն
էր ձկնորսութիւնն, աւազակութիւնն և
մաքսանենգութիւնը:

Գէորգի հայրը մի ուժեղ և առողջ
ծերունի էր և բոլորը նորան յարգում

Էին: Իսկ Գէորգն ընդհատկառակը վախ-
կոտ ու անշնորհք երեխայ էր և հօր ա-
սելով նա չէր կարող մարդ դառնալ: Կը-
րաբբի երեխաներն ամբողջ օրերով ազատ
թափառում էին ծովի ափին, ձուկ էին
որսում հօր հետ միասին և նորան օգ-
նում էին ապրանքը մաքսատան մէջ դնե-
լու: Գէորգ Կըրաբբը միշտ մտածմունքի
մէջ ընկած, դանդաղ, աւելի շուտ խան-
գարում էր հօրը քան օգնում և այդ
պատճառով հայրը միշտ յանդիմանում,
դուրս էր անում և նորան լիմար ու ան-
ընդունակ էր կարծում: Եւ որովհետև
ամենքը նորա մասին այդպիսի կարծիք
էին կազմել և ոչ ոք էլ նորա վերայ ու-
շադրութիւն չէր դարձնում, այդ պատ-
ճառով Գէորգը կարող էր հանդիստ կեր-
պով հեռանալ, թափառել ամեն տեղ և
մտածել ու երազել, ինչքան որ սիրտն
ուզում էր: Ալդպիսի զբօսանքների ժա-
մանակ նա սկսեց սիրել իւր հալրենիքի
ամայի բնութիւնը. նա շատ անգամ այն-

պիսի տեղեր էր գնում, որ ոչ ոք այնտեղ
չէր եղել և ժամերով կանգնած լսում էր
ծովի ափին խփուող ալիքների ձախը:
Ալդբօրոյի շրջակայքում բոլորը ճանա-
չում էին ծերունի Կըրաբբի որդուն և ա-
մենքն էլ ուրախութեամբ իրանց մօտ
էին ընդունում նորան: Նա գնում էր
աղքատ ու բարի գիւղացիների մօտ, մըտ-
նում էր ձկնորսների հետ ծովի մէջ և
լինում էր մաքսանենգների կիսաւերակ
խրճիթներում: Նա շատ էր լսում զանա-
գան պատմութիւններ, տեսնում էր ցա-
ւալի տեսարաններ և այդ բոլորը զուր
չէր անցնում ամեն բան դիտող տղակի
համար, այլ ընդհատկառակը խորն ընկ-
նում էին նորա սրտում և մնում էին
նորա լիշողութեան մէջ: Նորա քնքոյշ
սիրտը զգում էր կոսկիտ, չար մարդկանց
հոգեկան դըութիւնը և կեանքի բոլոր
տղեղ ու վատ կողմերը: Իւր ընտանիքի
մէջ նորնպէս նա շատ անգամ տեսնում
էր տխուր տեսարաններ: Գէորգի փոք-

թիկ քոլրիկը, որը մի հանդարտ ու լաւ
աղջիկ էր և որին ամբողջ ընտանիքը շատ
սիրում էր, մեռաւ երկար հիւանդու-
թիւնից յետոյ Հայրը սաստիկ դարդ էր
անում և յուսահատվում էր. աղջկալ հա-
մար լաց լինելով, նա բարկանում և նե-
զացնում էր միւս երեխաներին, վախեց-
նում էր կնոջը և այդ ամենից յոգնելով,
նա իրան որժ էր տալիս օղիով, որից ա-
ւելի գրգռվում և կոպիտ էր դառնում:
Այդ տեսակ կեանքը բաւական երկար
տևեց. յետոյ Հայրը մելամաղձութեան
մէջ ընկաւ և երբեմն երբեմն միայն
թունդ քէֆեր էր անում:

Գէորգի հայրն, երբ լաւ տրամադրու-
թեան մէջ էր լինում, հաւաքում էր ի-
րան մօտ ընտանիքին և բարձր ձայնով
կարդում էր Ս. Գիրքը, կամ իրան կար-
ծիքով մի որ և է լուրջ բան: Ինչ ամսա-
գիր որ նորա ձեռքն ընկնէր, նա պո-
կում, հանում էր ամեն տեսակ վէպիկ-
ներն ու պատմութիւնները, ասելով որ

դոքա արժանի չեն լուրջ յօդուածների
հետ միասին միւնոյն կազմի մէջ լինե-
լու: Գէորգ Կրաբբն առնում էր այդ կըտ-
րած թերթերը, կարդում էր ագահու-
թեամբ և աւելի ու աւելի սիրում էր
ընթերցանութիւնը: Նա հարևաններից
գրքեր էր խնդրում, և այն տղամարդիկ
ու կանալք, որոնք թոյլ աչքեր ունեին,
կարդում էր նոցա համար և այդպիսով
Գէորգը կարճ ժամանակում դառաւ նո-
ցա սիրելին: Նոքա Գէորգին ցոյց էին
տալիս իրանց պապական, հին գրքերը և
պատմում էին նորան իրանց աչքով տե-
սած առաջուայ ժամանակների մասին:
Կրաբբի գլուխը լցվում էր հարուստ պա-
շարով խեղճ մարգկանց կեանքի, ցաւե-
րի, աղքատութեան, ուրախութեան և նո-
ցա աւանդութիւնների ու սովորութիւն-
ների մասին:

Կրաբբի սկզբնական կրթութիւնը
շատ վատ էր. նա սովորում էր մէկ ա-
մենավատ դպրոցում. այնտեղից փոխուեց

մէկ ուրիշ դպրոց, որտեղ ուսումնասիրեց
բժշկութիւնը: Բժիշկ աւարտելուց յետոյ
նա վերադարձաւ Արդբօրօ:

Քիչ քիչ Կրաքքը բոլորովին միալ-
նակ մնաց. նորա ընկերներն աւելի հա-
րուստ էին և չէին մօտենում նորան և
միւս կողմից նո զգում էր այն զանա-
զանութիւնը, որ քանի գնում սաստկա-
նում էր իւր և իւր անկիրժ երկրացի-
ների մէջ: Նա միայն մէկի հետ մօտե-
ցաւ, իւր հարեւան օրիորդ Իլմայի, որի
հետ սիրում էր ժամանակ անցկացնել.
Բայց նորա հետ ամուսնանալ չէր կարող,
որովհետեւ ապրուստի միջոց չունէր:

Նա հօրից ժառանգել էր գիւրագր-
գռութիւն և յամառութիւն, իսկ մօրից
քնքութիւն, վախկոտութիւն և ամաչ-
կոտութիւն: Երբ նա գալիս էր արձա-
կուրդներին տուն հօր մօտ հանգստա-
նալու, իրան վատ էր զգում և տան
ասրըն ու կարգը կեղտոտ ու ողորմելի
էր երեսում նորան: Նա երազում էր ա-

պագալի համար ապահովուած գրութիւն,
փառք և ընտանեկան երջանկութիւն:
Բայց երբ նա եկաւ Ալգբօրօ բժշկութիւն
անելու, յափշտակութիւնն անցաւ. նա
աշխատանք բոլորովին չունէր իւր հայ-
րենիքում և աղքատութիւնն առաջուայ
պէս շրջապատեց երիտասարդ բժշկին:

Միւնորն ժամանակ կեանքն Ալգ-
բօրոյում նորա համար անտանելի էր
դառնում: Հայրը չքաւորութիւնից և ծե-
րութիւնից քանի գնում աւելի անհամ-
բեր և անվարուող էր դառնում, իսկ մայ-
քը դարգից ու հիւանդութիւնից թու-
լացած, արգէն էլ ոյժ չունէր իւր մար-
դու ծանր բնաւորութիւնը տպնելու:
Կրաքքն էլ վատ բժիշկ գուրս եկաւ. նա
շատ լաւ հասկանում ու մտածում էր
ցաւի մասին, քանի որ գեռ տանն էր.
Բայց հէնց որ մօտենում էր հիւանդի
մահճակալին, ամեն գիտութիւն մոռա-
նում, գլուխը կորցնում էր և տեսնելով
իւր անշնորհք լինելլ, թուլանում ու

լուսահատվում էր։ Նա վճռեց թողնել
բժշկութիւնը և պարապել գրականու-
թեամբ։ Կրաքը պատրաստուեց գնալ
Լօնդօն։ Հայն առաջ չէր համաձայնում
թողնել որդուն, բայց լետոյ նորա բերած
պատճառները խելօք համարելով, թո-
ղեց և Գէորգը 30 ռ. հետն առնելով,
ճանապարհ ընկաւ։

Հասնելով Լօնդօն, Կրաքը վճռեց
աշխատել ինչքան որ որժ ունի։ Նա կար-
գում էր հին հեղինակներին, վարժվում
էր ոտանաւորներ գրելու մէջ և յօրի-
նում էր բաւական շատ։ Նա իւր առա-
ջուալ արձակ գրուածքները տանում էր
զանազան գրավաճառների մօտ և սպա-
սում էր, որ տպուելուց լետոյ նա կ'ու-
նենալ թէ փող, թէ փառք և թէ պա-
տուէր կըստանալ նոր աշխատանքի հա-
մար։ Բայց նորա աշխատութիւնների մեծ
մասը վերադարձնում էին և Կրաքը լոյ-
սը կտրում էր, որ երբ և իցէ հանգա-
մանքները կարող են լաւանալ։ 30 ռ.

ծախսվում էր։ Նա ստիպուած էր լինում
իւր իրեղէնները ծախել, գրաւ դնել,
խնդրել իշխաններին, որ իրան օգնեն և
ալին։ Նատ անգում նա քաղցած էր մը-
նում և ալդպիսի ժամանակ նա մտածում
էր, որ բանտն ամենալաւ և ցանկալի
տեղն է իրան համար։ Նա շաբաթը մի-
այն մէկ անգամ էր միս ուտում, այն էլ
կիրակի օրերը մէկ վաճառականի տանը
և նորա կարծիքով ո՛չ մի համով ու քաղցը
բան չէր կարող համեմատուել այն խո-
րոված ոչխարի ոտի հետ, որ տալիս էին
այդ ճաշերի ժամանակ։ Ազնուութիւնը
նորան թոլլ չէր տալիս փող վերցնելու
ուրիշից, երբ տեսնում էր որ վճարելու
հնար չունի. ողորմութիւն խնդրել նա
ամաչում էր և նա չէր էլ հաւատում,
որ ալդպիսի միջոցով կարելի է ապրել։
Ահա ալդպիսի նեղ դրութեան մէջ, նա
վճռեց մէկից խորհուրդ հարցնել արդեօք
առաջուալ ճանապարհով գնալ, թէ ոչ
նա բարեկամներ ու ընկերներ չունէր,

զանազան յալտնի մարդկանց անուն տալով, նա վճռեց գիմել Բօրկին, որն ասպետական ազնուութիւն և ճառախօսելու տաղանդ ունէր. նա տէրութեան առաջին մարդկանց բարեկամն ու ընկերն էր. խորհրդարանում կշիռ ունեցող մարդ էր և իւր ճառերը լսողների սիրելին էր: Կրաքը վճռեց նորան նամակ գրել, խնդրելով օգնել իրան մի որեւէ կերպով: Միայն ձեր մեծ անունը կարող է իմ համարձակ վարմունքս ներել մասամբ, գրեց նա: Բայց ես էլի մէկ հասարակ միջոց ունեմ արդարանալու, որ կը հասկանալ ձեզ պէս բարձր հոգի ունեցող մարդը: Ես պատկանում եմ այն մարդկանց դասին, որոնց համար աշխարհիս երեսին տեղ չկայ, որոնք չունեն ոչ բարեկամ, ոչ ընկեր, չունեն հնար իրանց քրտնքի աշխատանքով ապրելու և վերջապէս չունեն հաց... Ալդ նամակն ուղարկելուց յետոյ Կրաքըն ալնպիսի հոգեկան անհանգստութիւն էր զգում, որ մինչև լոյս

վեստմինիստրեան կամուրջի վերալ անց ու դարձ էր անում: Կրաքը բաղդից Բօրկն ինքն էր կարդում իրան հասցէով եկած նամակները: Կրաքը ուղղակի և պարզ կերպով գիմելու ձեւ Բօրկի գութը շարժեց և նա ուզեց նորան օգնել: Միւս առաւօտը Գէորգը գնաց իմանալու իւր նամակի հետևանքի մասին: Նա սովոր էր մերժումներ լսել և չէր զարմանալ, եթէ այս անգամն էլ անյաջողութեան հանդիպէր: Բայց ընդ հակառակն երբ նա դողդոջիւն ձայնով իւր անունը տուեց, նորան իսկոյն տարան Բօրկի գրասենեակը: Մէկ ըոպէից յետոյ քաղցած ու շփոթուած երիտասարդի առաջ կանգնած էր մի 50 տարեկան մարդ, տգեղ և բարձրահասակ: Խնդրելով նստել Գէորգին նա հանգստացրեց և յոլս տուեց նորան: Միքանի օրից յետոյ Բօրկը նորան հրաւիրեց ճաշի, ծանօթացրեց իւր կնոջ հետ և խնդրեց Կրաքին կարդալ իւր գրուածքները:

Բօրկն ընտրելով նորա աշխատութիւններից մէկն, ինքն անձամբ տարաւգրավաճառի մօտ, որը համաձայնեց տըպել: Մի քանի ժամանակից յետոյ կրաբբը ըստեց Բօրկին իւր մէկ նոր վէպի սկիզբը «Գիւղ» վերնագրով, որն աւելի դրաւեց Բօրկի ուշադրութիւնը և նա շատ սիրեց Կրաբբին ու աւելի շուտ շուտ տեսնվում էր նորա հետ. Գէորգին ծանօթացրեց այն ժամանակուայ յայտնի մարդկանց հետ և հետը տարաւ ամարանոց, որ նա աւելի հանգիստ կերպով կարողանայ իւր նոր աշխատութիւնը վերջացնել: Այսուը Բօրկը նորան շատ անգամ խանդարում էր պարապելու և նորա հետ միասին գնում էր գեղեցիկ շրջականներում թափառելու. Պատահմամբ իմանալով, որ Գէորգը լատիներէն գիտէ, հարցրեց թէ նա արդեօք հոգեորական լինելու կոչումն ունի: Գէորգը վաղուց մտածում էր այդ մասին, անձնական փորձը և հետազոտութիւնները նորա

մէջ զարգացրել էին սէր դէպի աղքատ ու թշուառ մարդիկ և նա կամենում էր իւր բոլոր ոլժերը նուիրել նոցա միխթարելու և կրթելու գործից: Մի քանի ժամանակից յետոյ Բօրկը գնաց նորեչի եպիսկոպոսի մօտ և կարճ միջոցում իւր ընկերի գործն առաջ տարաւ:

Այդ միջոցին Գէորգ Կրաբբը 600 ռուբլի ստացաւ գուքս Տիւրլօ լորդից: Այն ժամանակ գրագէտների պիտուքները շատ անգամ տալիս էին հարուստ իշխանները:

Կրաբբը դուքս Ռուտլէնդի մօտ մատուռի վերակացուի պաշտօն ստացաւ և Լօնդօնից հեռացաւ: Գնալուց առաջ նա այցելեց գիտութեան մշակներին և վերնալարկերում ապրող բանաստեղծներին, որոնց հետ նա երեսն բաժանում էր աշխատանքն ու վիշտը. նա նոցա շատ փող բաժանեց և այդպէսով մի քանի ժամանակ ազատեց նոցա քաղցածութիւնից: Աղքատներին փող բաժանելիս

նա միշտ շռայլ էր և ամեն զգուշութիւն մոռանում էր, երբ նորանից օգնութիւն էին խնդրում իւր գրագէտ եղբայրները։ Այդպիսի դէպքերում նա մոռանում էր իրան, իւր ընտանիքին, պարտքեր էր անում և միայն այն ժամանակ էր հանգստանում, երբ տեսնում էր որ ամեն բան արել է ուրիշի համար, ինչ որ ձեռքիցն եկել է։ Դուքս Տիւրլովի տուած ընծայի մեծ մասը Լօնդոնից հեռանալուց առաջ նա բաժանեց աղքատներին։

Ճանապարհին նա ծռուեց դէպի Ալգբօրօ, որ տեսնի իւր ծնողներին և օրիորդ Իլմային։ Արդէն շատ տարի էր անցել այն ժամանակից, երբ նա վերջին անգամ իւր հայրենիքումն էր, որտեղ շատ բան էր փոխուել։ Նորա մալրը մեռել էր. հօր գրութիւնը գարձեալ վատ էր. իսկ օր. Իլման առաջուալ պէս դեռ սիրում էր Գէորգ Կրաբբին։ Նորա ընտանիքի հին բարեկամները հաւաքուե-

ցին ծերունի Կրաբբի մօտ, որ իրանց ուրախութիւնը յայտնեն նորա որդու յաջողութեան համար։ Ծերունու ուրախութեանը չափ չկար, տեսնելով որդու յաջողութիւնները և Գէորգին տանելով մէկ ուրիշ սենեակ, ցոյց տուեց բոլոր նորա գրուածքները, որ պահպանում էր մեծ խնամքով։

Գալով գուքսի կալուածքը, Կրաբբը քահանայի կոչում ստացած, պէտք է ողորմութիւն բաժանէր, որ տուել էր առատ կալուածատէրը։ Կրաբբն անփորձ լինելով, բաժանեց անարժաններին, որի վատ հետևանքները սովորեցրին նորան աւելի զգուշ լինել։ Մայիսին 1783 թ. նորա Գիւղ վէպի համբաւը հասաւ մինչև իրան բնակուած տեղը։ Դուքսը Լօնդոն գնալիս տարաւ հետը և Կրաբբին, իսկ երբ Իրլանդիայում Լօրդ Լէյտէնանտի պաշտօն ստացաւ, այն ժամանակ հըրաւիրեց նորան հետը գնալ ծառայելու։ Կրաբբը, որ այդ ժամանակ արդէն յայտ-

նի էր, կարող էր փայլուն ու մեծ ապագայ ունենալ, եթէ այդ առաջարկութիւնն ընդունէր: Բայց նորա սիրտն ու միտքը պաշարուած էին ուրիշ բանով: Նա աւելի լաւ համարեց ապրել աղքատների համեստ շրջանում և օգնել նոցա: Դուքսը չկարողացաւ համոզել Կրաքին, որ վճիռը փոխէ և բաժանուելով նորանից, առաջարկեց, որ գոնէ նա համաձայնի ասլրել կնոջ հետ իրան ամրոցում: Կրաքը նոր էր ամուսնացել օրիորդ Իլմայի հետ:

Իւր ծխականների համար գործելով, Կրաքը գոհ էր: Նա աշխատում էր մտենալ իւր ծխերի հետ, հետաքրքրվում էր նոցա ցաւերով և դառնում էր նոցա խորհրդատուն ու օգնականը: Նա ժողովրդի հետ մտերմանալով, նոր նոր դիտողութիւններ էր անում և տեսնում էր կեանքի զանագան պատկերներ: Դորա հետեւանքն այն եղաւ, որ նա գրեց «Ճշխական ցուցակներ» վերնագրով շարադ-

րութիւնը, որը կարդալիս ամեն մէկ անգղիացի լիշում էր մոռացուած բանաստեղծ Գէորգ Կրաքին. Քսան տարուց աւելի էր անցել նորա առաջուայ և նոր գըրուածքի մէջ: 1809 թ. Կրաքի էլլի մէկ նոր շարադրութիւնը դուրս եկաւ, «Արուարձան» անունով. իսկ աւելի ուշ, վեպիկներ և գիւղական պատմութիւններ:

Հասկանալու համար, թէ ի՞նչն էր իսկապէս Կրաքի գրուածքները գրաւողը, մենք կ'ասենք, որ նա ցածր գասակարգի կեանքի պատկերները նկարագրելով, վճռել էր ամեն բան ճշտութեամբ գրել և իրողութիւնը չէր ծածկում իւր երեակայութեան ներկերով: «Գիւղ» վեպի սկզբում նա ալսպէս է ասում իւր աշխատութեան մասին՝ «Իմ երգիս նպատակն է ներկայացնել գիւղական կեանքն իւր ցաւերով ու դժուարութիւններով, գիւղացու երիտասարդական ժամանակուայ տարիներն իւր յաջողութիւններով ու թշուառութիւններով և նորա փշոտ

ասպարէզի վերջը։ Ես մտադիր եմ երգելու խեղճ մարդու իսկական և ճշմարիտ կեանքը, իմ մուսաս շնորհք չունի ուրիշ երգեր երգելու։ «Գէորգ Կրաբբը կարող էր ճշմարտութիւնը պատմել, որովհետև ինքը շատ ցաւ ու դարդ էր տեսել և իւր կեանքի ամենալաւ ժամանակն էլ աշխատում էր դարձեալ աղքատների շուրջը։ «Ես հաւատում եմ, որ դաշտերն էլ նախիրներն էլ ունեն իրանց գեղեցկութիւնը թէ խաջնարածի և թէ հասարակ աչքով նայողի համար։ Բայց երբ ես տեսնում եմ դաշտերում մեր գիւղացիներին դժուար աշխատանքի մէջ կէս օրուայ խիստ արևետ տակ, որից նոցա քըրտլնքով ծածկուած երեսն ու մարմինն ալրվում է, երբ ես աչքերովս հսկում եմ, թէ ինչպէս ամենաթոլլ մշակն անդամ աշխատում է գործն առաջ տանել, որ ետ չմնայ իւր առողջ ընկերից, ուրեմն ինչպէս կը համարձակուեմ ծածկել այդ իսկական չարչարանքի պատկերը բանաս-

տեղծական գեղեցկութեան տակ։

Քահանայ Կրաբբի կեանքն արտաքին հետաքրքրութիւն չունի; մօտ 40 տարու չափ անցաւ առանց մի որևէ նըշանաւոր գէպքի։ Ծեր Կրաբբին շըջապատեցին իւր երկու որդոց ընտանիքը և իւր ժողովրդի սէրը։ 1814 թ. նորա հանգարտ ու երջանիկ կեանքը խախտուեց նորա կնոջ մահով։ Կինը երկար ու ծանր հիւանդութիւնից յետոյ մեռաւ 63 տարեկան հասակում։ Կրաբբն այդ ցաւը չըկարողացաւ տանել, հիւանդացաւ և մի քանի օր կեանքի ու մահուան մէջ էր։ Առողջանալով, նա ընկաւ մելամաղձութեան մէջ և չնայելով իւր որդոց խնամքին, նորա տիրութիւնը չէր անցնում։ Գործերը թողնելով նա գնաց Ալգբօրօ, որտեղ 40 տարի առաջ ապրում էր նորա հարսնացուն և որտեղ ինքը թափառում էր ինչպէս մի սիրահարուած երիտասարդ և յիշելով իւր կնոջը, նա անգադար լալիս էր։ Որդոց խնդրելով, նա

վերադարձաւ տուն և նորից ընկաւ տըխ-
ըութեան մէջ, այնպէս որ քիչ մնաց խե-
լագարուէր: Նա չէր կարող այնտեղ ապ-
րել, ամէն բան լիշեցնում էր հանգու-
ցեալին: Հին ընկերները նորա դրութիւ-
նը տեսնելով, աշխատեցին նոր պաշտօն
տալ ծրութիղժում, կրաբբն ուրախու-
թեամբ թողեց իւր առաջուայ տեղը և
ընտանիքով փոխուեց այդ քաղաքը:

Ծրութիղժում ճանաչում էին կրաբ-
բին ինչպէս բանաստեղծի և բարերար
մարդու: Նորա համար փառաւոր ընթ-
րէք սարքեցին, որից սաստիկ զգածուեց
ծերունին: Բայց շուտով ծրութիղժեցիք
հիասթափուեցին: Կրաբբի նոր ժողովուր-
դը ստիպում էր, որ նա իբրև բանաս-
տեղծ, սրախօս և դուրեկան խօսակից
կըլինի, ինչպէս քահանայ սպասում էին
նորա քարոզներին, որից ամեն լսող պի-
տի լաց լինէր և վերջապէս սպասում էին
տեսնել հրապարակական և աչք շլացնող
մարդասիրական մեծագործիւններ, ո-

րից ամենքը պիտի հիանալին: Եւ փոխա-
նակ այդ տեսակ քահանալի, դուրս եկաւ
մի հասարակ, անխօս, կնոջ կորուստից
մռալացած և բարերարութիւն մէջ ընտ-
րութիւն անող մի մարդ: Նա օգնում էր
առանց վկաների և ոչ ոք չէր տեսնում
ոչ նորա արտասուքը. ոչ համբոյրը և ոչ
էլ քնքոյշ խօսքերը: Տխուր ծերունին
միայն իսկական թշուառութիւնների ժա-
մանակ քաղցր էր վարվում հիւանդների,
ծերերի և երեխանների հետ: Նա գիշեր-
ները շատ անդամ գնում էր այնպիսի
աղքատների մօտ, որոնք ամաչում էին
իրանց դրութիւնից և ոչ ոքի էլ յալտնի
չէին: Ընդհակառակը պարապ, չար, ե-
րես առած ու իրանց խեղճութիւնն ու-
րիշներին ցոյց տուող մարդկանց հետ
կրաբբը շատ խիստ էր և այդպիսիներին
ողորմութիւն տալիս շատ սառն էր լի-
նում և խրատում էր շարունակ:

Կրաբբից անբաւական լինողներ շատ
կային: Խորհրդաբանի անդամներ ընտրե-

լու ժամանակը մօտենում էր: Կրաբբը
իւր ձախը տուեց մէկին, որին քաղա-
քացիները չէին ուզում: Երբ Կրաբբը գը-
նում էր ընտրութեանը, ժողովուրդը նո-
րան կանգնեցնում և համոզում էր փո-
խել իւր վճիռը, բայց տեսնելով որ նա
չի համտայնում, սկսել հայհոյել նորան
և սպառնալիքներ անել: Նոցա կոպիտ
բռնութեանը Կրաբբը պատասխանեց
խիստ կերպով և խոռվարաներին բա-
ցատրելով ամեն բան, գնաց առաջ: Զը-
քաշուելով բարկացած հակառակորդների
ներկայութիւնից, նա իւր ձախը տուեց
նորան, որին որ ինքն արժանի էր հա-
մարում այդ գործի համար:

Միենոյն ժամանակ նորա գաղտնի
գործունէութիւնն երևան ելաւ: Նորան
տեսնում էին նախակըթական գպրոցնե-
րում շրջապատուած երեխաներով, որոնց
հասկացնում էր Ա. Գրքի խօսքերը: Գի-
շերները նորան հանդիպում էին փողոց-
ներում և տեսնում էին, որ նա գնում է

աղքատներին տեսութեան: Լուր էր պը-
տըտվում, որ նա օգնում էր խեղճ ու-
սանողներին: Օգնում էր նոյնպէս բարե-
գործական հաստատութիւններին և կի-
րակնօրեայ ժողովրդական դպրոցներին:
Քիչքիչ նորա հօտը սկսեց ծերունի քա-
հանային համակրել. աննկատելի կերպով
ժողովրդի ճաշակը լաւացաւ և Կրաբբն
առաջուան անբաւականութեան տեղ
սկսեց յարգանք վայելել: Ժողովրդի այդ
քաղցը վարմունքից, նորա խստութիւնն
ու տիրութիւնը քիչ քիչ անցաւ. բոլորը
նորան սիրում էին, տղամարդիկ յարգում
էին Կրաբբին նորա գործունէութեան հա-
մար, իսկ կանալք նորա բարութեան և
համեստութեան: Կրաբբին հանդիպելիս
հասարակ ժողովուրդը գլխարկը հանում
և խորը ողջունում էր նորան:

Այդ 65 տարեկան ծերունու արտա-
քինը շատ գուրեկան էր. նորա մռալլ ե-
րեսը շատ անգամ քաղցը էր և պարզ
ժպիտով էր փալլում: Նորա ճակատը

բարձր ու հանճարեղ էր և մազերը ձիւնի նման սպիտակ էին. նորա մէջքը ծերութիւնից մի քիչ կռացած էր, բայց նադեռ բաւական առողջ էր:

Այդ միջոցին կրաբքը գնաց Լօնդօն, որտեղ ուրախութեամբ ընդունեցին բոլոք, որոնք նորան սիրում, կամ ճանաշում էին նորան միայն իւր գրուածքներով։ Նա վաղուց արդէն չէր եղել Լօնդօն, որտեղ անցուցել էր իւր դառն երիտասարդութիւնը։ Ծերութեան ժամանակ գալով Լօնդօն, նա հանդիպեց ջահել և շքեղ ապրող գրագէտների։ Ուր մնացին արդեօք վերնալարկերում ապրող բանաստեղծները։ Միթէ Վալտէր Սկոտարը մէկ ամսուան աշխատանքի համար ստանում է այնքան, որ բաւական է նորան ամբողջ կեանքի համար։ Կրաբքն ինքն էլ փորձով զգաց, թէ ո՞չչափ հիմայ բարձր է գնահատվում աշխատանքը։ Իւր գրուածքների համար մեծ գումար ստանալով, նա շատ զգածուեց և

յայտնեց իւր անկեղծ ուրախութիւնը։

Կրաբքը մեանելուց երկու ամիս առաջ, չնայելով որ 77 տարեկան էր, բայց դեռ առողջ, ժիր ու աշխատասէր էր, ինչպէս և միշտ։ Նա առաջուայ պէս իւր քահանայական պարտաւորութիւնները կատարում էր ճշտութեամբ և քարոզներ էր խօսում նոյն ցածը ու քաղցր ձայնով, որ գեռ շատ տարիներ լսվում էր ժողովրդի ականջում։ Երեխաներն առաջուայ նման շրջապատում էին նորան թէ տանը և թէ ման գալիս։ Յունուարի 29-ին, 1832 թ. նա հիւանդացաւ և վախճանուեց փետրուարի 3-ին։ Հենց որ նորա մահը լսեցին Տրօուբրիդժում, խանութները փակեցին։ Կազմեցին պատգամաւորութիւններ նորան փառաւոր կերպով թաղելու համար և ստորագրութիւն բացին արձան կանգնեցնելու համար։ Նորա թաղման օրը նորից խանութները փակեցին։ Եկեղեցիներում սև քող քաշեցին։ Մեծ բազմութիւն հետեւում էր

Նորա գագաղին հիմներ երգելով։ Եւ ա-
մենքը միաբերան ասում էին՝ օրհնուած
է այն ականջը, որ լսել է նորա ձախը և
այն աչքը, որ տեսել է նորա հոգու մե-
ծութիւնը։ Նա ազատեց իւր եղայլնե-
րին աղքատութիւնից, նա որբերի հայր,
անօգնականների պաշտպան էր և նորա
սիրտը լցուած էր քաղցրութեամբ, բա-
րութեամբ և հեղութեամբ և նորա շըր-
թունքները շշնջում էին միշտ իմաս-
տուն ու լաւ խրատներ...

Կրաբբի լիշտատակին կանգնեցրած
մարմարէ մահարձանը ներկայացնում է
մի մեռնող ծերունու Ս. Գիրքն առաջը
դրած. Երկու հրեշտակներ կանգնած են
նորա երկու կողմը և կարծես սպասում
են նորա հոգուն, որ մնաս բարե է ա-
նում այս աշխարհին:



4464

29

Նոյն թարգմանչինն է

Բ. կ.

1	Յովշան Գուտտենբերգ	.	.	—	15
2	Դօկտօր Զէններ	.	.	—	20
3	Մանկական Թատրօն	.	.	1	—
4	Իբսէնի, Խօրա	.	.	—	30
5	Լիր Ալքայ	.	.	—	5
6	Գայլ	.	.	—	3
7	Թուղթ և Հին Գրքեր (Օստրօս Գօրսկի)	.	.	—	5
8	Տիրողացի Աղջիկ և Ժղատ	.	.	—	5
9	Մեր Պապի Գաւաղանը	.	.	—	5
10	Անհանդիսան Գիշեր	.	.	—	5
11	Արսի Գնդակ	.	.	—	5
12	Մայրական ռէր	.	.	—	5
13	Մըցումն	.	.	—	5
14	Կէորդ Արարտ	.	.	—	5



